**Արձանագրություն N 4**

**ՀՀ ՆԳՆ ԳՀԱՇՁԲ-2026/Է-12 ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի**

**ք.Երևան** **« 02» 03. 2026թ. ժամը 11:30**

**Մասնակցում էին՝**

ՀՀ ՆԳՆ տնտեսական վարչության շինարարության պլանավորման և վերահսկողության բաժնի պետ Ա. Հովհաննիսյան-անձնաժողովի նախագահ

ՀՀ ՆԳՆ տնտեսական վարչության շինարարության պլանավորման և վերահսկողության բաժնի գլխավոր մասնագետ Տ. Հարությունյան-գնահատող անդամ

ՀՀ ՆԳՆ տնտեսական վարչության շինարարության պլանավորման և վերահսկողության բաժնի գլխավոր մասնագետ Ռ. Բերբերյան -գնահատող անդամ

ՀՀ ՆԳՆ տնտեսական վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ Է. Մնացականյան-գնահատող անձնաժողովի քարտուղար

**Օրակարգ՝**

ՀՀ ՆԳՆ ոստիկանության ՀՈԳՎ Տարոնի բաժնի ընթացիկ շին-վերանորոգման աշխատանքների կատարման նպատակով ազմակերպված **ՀՀ ՆԳՆ ԳՀԱՇՁԲ-2026/Է-12** ծածկագրով գնման ընթացակարգի մասով գնահատող հանձնաժողովը կողմից 6.02.2026 թվականին տեղի ունեցած գնահատման նիստում առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Հարություն և Արգիշտի» ՍՊԸ-ի ողմից ներկայացված հայտը մերժվել էր: Մերժման պատճառ էր հանդիսացել այն հանգամանքը, որ նշված ընկերությունը երառված է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Արձանագրություն 3-ը և այմանագիր կնքելու մասին որոշումը հրապարակելուց հետո «Հարություն և Արգիշտի» ՍՊԸ-ի ներկայացուցչի կողմից ստացվել է անգ, որով հայտնել են, որ թյուրիմացություն է եղել և նրանք ընդգրկված չեն վերոնշյալ ցուցակում: Հանձնաժողովի քարտուղարի ողմից կրկին ստուգվել է տվյալ ցուցակը և պարզվել է, որ նախորդ ցուցակը բեռնված է եղել հին ժամկետով, որում դեռ նկերությունը ներառված էր գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Տեխնիկական իպակի ի հայտ գալուց անմիջապես հետո հանձնաժողովի քարտուղարը տեղեկացրել է հանձնաժողովի նախագահին: ամաձայն ՀՀ կառավարության 04.05.2017 թ.-ի գնումների գործընթացի կազմակերպման կարգի 26-րդ կետի 7-րդ ենթակետի գնահատող հանձնաժողովի կողմից արտահերթ նիստ է հրավիրվել: Հանձնաժողովի կողմից կատարվել է հայտերի վերագնահատում:

**Չափաբաժին 1**. ՀՀ ՆԳՆ ոստիկանության ՀՈԳՎ Տարոնի բաժնի ընթացիկ շին-վերանորոգման աշխատանքներ

| | Նախահաշվային գին | | | 7 531 582 |
|---|---|---|---|---|
| | **Մասնակցի անվանումը** | **Գինն առանց ԱԱՀ** | **ԱԱՀ** | **Ընդհանուր արժեք** |
| 1 | **«Հարություն և Արգիշտի» ՍՊԸ-ն** | **5 020 000** | **1 004 000** | **6 024 000** |
| 2 | **«Նոմինգ» ՍՊԸ** | **5 132 500** | **1 026 500** | **6 159 000** |
| 3 | **«Մեգա Բուլդեր» ՍՊԸ** | **5 653 500** | **1 130 700** | **6 784 200** |
| 4 | **«ԱԴԱՌ» ՍՊԸ** | **6 025 000** | **1 205 000** | **7 230 000** |

1. **Տվյալներ ընթացակարգի ընթացքի մասին:**

**Ելնելով վերոգրյալից՝ գնահատող հանձնաժողովի կողմից կայացվեց որոշում չեղյալ համարելու՝ ՀՀ ՆԳՆ ԳՀԱՇՁԲ-2026/Է-12 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրությունը և առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝«Հարություն և Արգիշտի» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:**

Անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ: Անգործության ժամկետի ավարտից հետո **«Հարություն և Արգիշտի» ՍՊԸ**-ին օրենքով սահմանված ժամկետներում կառաջարկվի կնքել պայմանագիր:

**Հանձնաժողովի նախագահ՝** Ա. Հովհաննիսյան

Տ. Հարությունյան

**Հանձնաժողովի գնահատող անդամներ՝** Ռ. Բերբերյան

**Հանձնաժողովի քարտուղար՝** Է. Մնացականյան